ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մարտի 27-ին, կիրակի օրը, առավոտյան, Երևանի Ս. Սարգիս Մայր եկեղեցու բակը լի էր հավատացյալներով: Նրանք տոնական տրամադրությամբ, ձեռքներում ուռենու թարմ ճյուղեր բռնած, եկել էին մտովի դիմավորելու Փրկչի գալուստը Երուսաղեմ:

Այդ օրը Ս. Էջմիածնից Երևան էր ժամանել Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպիսկոպոս Պոլապայանը՝ օրվա տոնի առթիվ նատուցելու ս. պատարագ:

Ժամը 11-ին, «Խորհուրդ խորին» սքանչելի շարականի հոգեպարար հնչյունների ներքո, գերաշնորհ սրբազան հայրը, զգեստավորված, հանդիսավոր թափորով շարժվում է դեպի եկեղեցի:

Սկսվում է հանդիսավոր ս. պատարագը: Պատարագի սրբազան արարողությանը երկյուղածությամբ և բարեպաշտ զգացումներով հետևում են Ս. Սարգիս եկեղեցու քահանայից դասը, թեմական և եկեղեցական խորհուրդների անդամները և բազմահարյուր հայ հավատացյալներ: Ս. Սեղանի վրա պատարագիչ սրբազան հորը սպասարկում է Տ. Գարեգին վարդապետ Ներսիսյանը:

«Հայր մեր»-ից առաջ, «Թագաւոր գոլով» շարականի երգեցողության ներքո, եկեղեցու բեմ է բերվում Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի սըրբատառ կոնդակը, որ ընթերցում է Տ. Ներսես եպիսկոպոսը: Իր սույն կոնդակով Նորին Սրբությունը Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ է նշանակում հոգեշնորհ Տ. Գարեգին վարդապետ Ներսիսյանին: Կոնդակում Հայոց Հայրապետը վեր է հանում Մայր Աթոռի միաբան երիտասարդ վարդապետի մտավոր ու հոգեկան բարեմասնությունները և վստահություն հայտնում, որ նա ձեռնհասությամբ և մեծ նվիրումով կկատարի իրեն վստահված այդ բարձր և պատասխանատու պաշտոնը: Ապա նորընտիր առաջնորդական փոխանորդի ուսերին գցում են հայրապետական պարգևը՝ մանուշակագույն ծաղկյա փիլոնը:

Այնուհետև, Ծաղկապարդի տոնի առթիվ, հավուր պատշաճի քարոզ է արտասանում Տ. Ներսես եպիսկոպոսը՝ բնաբան ունենալով օրվա շարականի հետևյալ նախադասությունը. «Ծերք ոստովք ձիթենեօք և տղայք ոստովք արմաւենեօք և երամ երամ դասուք աղաղակէին. օրհնեալ եկեալ ի յանունն Տեառն»: Իր քարոզում սրբազան հայրը վեր հանելով Քրիստոսի Երուսաղեմ մուտքի կրոնա-բարոյական մեծ իմաստը՝ նշում է, որ Քրիստոս այսօր խորհրդապես կրկին մուտք է գործում նոր Երուսաղեմ, այն է՝ այս եկեղեցուց ներս, հավատացյալների սրտերի մեջ: Նա, դիմելով հավատացյալներին, հարցնում է, թե, որպես ձիթենու և արմավենու ճյուղեր, ունե՞ն արդյոք իրենց սրտերի մեջ քրիստոնեական անհրաժեշտ առաքինությունները՝ դրանցով դիմավորելու համար մեր Փրկչի այցը:

Իր քարոզի վերջում պատարագիչ սրբա-

Առաջնորդական փոխանորդի նշանակման կոնդակի ընթերցում

կանը սրտագին շնորհավորանքներ է ուղղում Տ. Գարեգին վարդապետ Ներսիսյանին իր նոր պաշտոնի նշանակման առթիվ՝ մաղթելով նրան երկար քաջառողջ կյանք և բեղմնավոր ու արդյունավետ գործունեություն՝ ի փառս Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հուրախություն հավատացյալ ժողովրդյան:

Ապա Ս. Սարգիս եկեղեցու երկու ավագ քահանաների ուղեկցությամբ նորընտիր առաջնորդական փոխանորդը հանդիսավոր կերպով բալմում է առաջնորդական գահի վրա:

«Սիրտ սուրբ և հոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ»:

Հավարտ սուրբ պատարագի, եկեղեցուն կից առաջնորդարանում տեղի է ունենում ընդունելություն, որտեղ քահանայից դասը, թեմական խորհրդի անդամները և եկեղեցու վարչական պաշտոնեությունը ջերմորեն շնորհավորում են Տ. Գարեգին վարդապետին՝ ցանկանալով նրան հետագա նորանոր հաջողություններ իր եկեղեցանվեր աշխատանքներում: